ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂ

# ԻՐԻՆԱ ԽԵՉԱՆՈՎԱՆ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՍԻՐՈ ՊՏՈՒՂ



*Հիշո՞ւմ եք Հայաստանում 2011 թվականին անցկացվող Մանկական Եվրատեսիլը եւ Վրաստանը ներկայացնող «Candy Music» խումբը: Դա աղջիկների քառյակ էր, որն իր պայծառությամբ ու ռետրոմոդեռն ոճով գրավել էր աշխարհի հանդիսատեսի համակրանքն ու հաղթել երգի այդ խոշոր մրցույթին: Խմբի անդամներից Իրինան ամենաճստիկն էր: Չորսից մեկին՝ Աննա Խանչալյանին, արդեն հասցրել էինք ճանաչել ու սիրել, մյուսների մասին պարզապես տեղեկանում էինք մամուլի էջերից ու հեռուստաէկրաններից: Այդուհանդերձ, փոքրիկ աստղերից ամենափոքրիկը՝ Իրինա Խեչանովան, հատկապես էր շարժել մեր հետաքրքրությունը: Թե ինչո՞ւ, կռահելը դժվար չէր, հայկական ազգանուն ուներ՝ Խեչանովա:*

Իրինա Խեչանովան մեծանում է հայ-վրացական ընտանիքում. հայրը՝ Դիմիտրի Խեչանովը, ատամնաբույժ է, մայրը՝ Մակա Էլբաքիձեն, մասնագիտությամբ լրագրող է, նաեւ խնամում է իր երեք զավակներին՝ Իրինային եւ նրա ավագ ու կրտսեր եղբայրներին:

Իրինայի երազանքը մեկն է՝ սեփական տաղանդով փայլել աշխարհում: Իսկ այդ ուղղությամբ հսկայական աշխատանք է հարկավոր: Պատանի երգչուհին սովորում է Դեմիրելի անվան մասնավոր դպրոցի 10-րդ դասարանում: Երկար ժամանակ ձայնը կատարելագործում էր անհատական պարապմունքների միջոցով, որից հետո, երբ կայացրեց երգչուհի դառնալու իր երազանքը, ընդունվեց մայրաքաղաքի Եվգենի Միքելաձեի անվան երաժշտական դպրոցը: Նպատակ ունի ուսումը շարունակել կոնսերվատորիայում:

- Երգում եմ յոթ տարեկանից: Առաջին բեմելս Շ.Ռուսթավելու անվան պետական թատրոնում էր, հանրահռչակ Թամրիկո Չոխոնելիձեի համերգն էր, եւ ես մի քանի երգ կատարեցի: Հետո արդեն մասնակցեցի «Ռուսթավի-2» Անա-Բանայի մրցույթին ու լավագույն տասնյակ մտա՝ հավանության արժանանալով հաղորդման հիմնադիր եւ անվանի երաժիշտ Մարինա Բերիձեի կողմից: Սա համարում եմ իմ առաջին հաղթանակը, որը մեծապես նպաստեց «Candy Musik» խմբում իմ ներգրավմանը: Պրոդյուսեր Գիգա Կուխիանիձեն ընտրեց մեզ եւ ստեղծեց մի հրաշալի միություն: Ամեն ինչ շատ արագ ընթացավ: Գրեթե երեք ամիս բացակայեցի դասերից, օր ու գիշեր աշխատում էինք եւ հասանք մեր նպատակին՝ հաղթեցինք: Իհարկե Անա-Բանայում նույնպես մեծ դպրոց եմ անցել եւ երախտապարտ եմ իմ ուսուցիչներին, բայց Եվրատեսիլը լրիվ այլ էր: Ես սկսեցի հավատալ, որ նվիրվածությունն աշխատանքին անպայման հաղթանակ է բերում, ու ժամանակն այստեղ այդքան էլ դեր չի խաղում: Ես իմացա թիմային աշխատանքում, սովորեցի բալանսավորել ձայնս, պարել, նաեւ լրագրողների հարցերին պատասխանել:

«Candy Musik» խումբը գործունեության երկար տարիներ չունեցավ, քանի որ աղջիկներից յուրաքանչյուրը դեռ նոր պետք է սկսեր իր ուղին եւ գիտելիքների պաշար հավաքեր՝ առավել հաստատուն քայլերով երաժշտության աշխարհ մտնելու ու կայանալու: Օրինակ, Աննա Խանչալյանը այսօր սովորում է Երեւանի պետական կոնսերվատորիայում, նա էլ, մյուսներն էլ, ուսմանը զուգահեռ շարունակում են հանդես գալ երկրի ու միջազգային բեմերից: Իրինա Խեչանովան նույնպես ոչ միայն մասնակցում, այլեւ ծննդավայր է վերադառնում մեծ հաղթանակներով: Այսպես. նախորդ տարի, նա Ռումինիայից հայրենիք բերեց միանգամից երկու ոսկե մեդալ: Սա երգի միջազգային մրցույթ էր, որ անցնում էր «Աշխարհի ծաղիկներ» խորագրի տակ: Իրինայի հնչեցրած Թամար Գվերդծիթելու «Սաքարթվելո» երգը նվաճեց առաջին տեղն ու Հանդիսատեսի համակրանք անվանակարգը:

Այդուհանդերձ, խոստովանում է, որ «Եվրատեսիլ-2011»-ը անջնջելի հետք թողեց իր վրա: Նաեւ՝ այն առումով, որ այդ օրը՝ դեկտեմբերի 3-ին, Իրինայի ծննդյան օրն էր, լրանում էր նրա 11 տարին: Ի դեպ, այս հաղթանակից հետո, երկրի նախկին նախագահ Մ.Սաակաշվիլու նախաձեռնությամբ, «Candy Musik» խումբը երեք շաբաթ անցկացրեց Անգլիայում:

Չնայած փոքր հասակին, Իրինան մասնակցել է տարբեր մրցույթ-փառատոների Թուրքիայում, Գերմանիայում, Անգլիայում, Հարավային Աֆրիկայում, Ռումինիայում, Մոլդովայում եւ Ռուսաստանում, ուր, ի դեպ, նրան հրավիրել էր Բեդրոս Կիրկորովը: Իրինան չափից ավելի աշխատասեր է, ու դրանով են պայմանավորվում նրա հաջողությունները: Իսկ իր հաջողության գրավականը անվերապահորեն համարում է կյանքի ամենակարեւոր մարդուն՝ բարեգութ Մայրիկին:

- Նա իմ առաջին քննադատն է,- խոստովանում է Իրինան,- ընդհանրապես՝ ընտանիքս, որ երբեք չի դավաճանում եւ կողքիս է՝ ճիշտ խորհուրդներով: Ինձ վստահում են եւ մշտապես սատարում:

Մեր զրույցի ավարտին, հենց «Վրաստան» թերթի միջոցով Իրինան ցանկացավ շնորհավորել իր մայրիկի ու բոլոր կանանց Մարտի 8-ը:

- Հայերենին, ցավոք, դեռ չեմ տիրապետում, գիտեմ, որ ինձ նմանները Թբիլիսիում քիչ չեն, բայց կաշխատեմ անպայման սովորել: Մեծ սիրով ու ջերմությամբ շնորհավորում եմ բոլորիս տոնը: Երջանիկ լինենք՝ շրջապատված մայրական սիրով, գորովանքով, ուշադրությամբ:

***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ***

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏԵՍԱՖԻԼՄԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*2016 թվականի մարտի 6-ին, «Հայարտուն» կենտրոնում, տեղի ունեցավ «Միխայիլ Լորիս-Մելիքով. մեծ հայն ու անպարտելի զորավարը» տեսաֆիլմի եւ «Էրգրի կարոտով» գրքի շնորհանդեսները:*




Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը ողջունեց Սերգո Երիցյանի գլխավորած հայաստանյան «Կարծիք» ստեղծագործական խմբի՝ Հրաչիկ Պապինյանի, Սամվել Գալստյանի, Գարիկ Աբելյանի, Կարինե Տիտանյանի հերթական այցելությունը Թբիլիսի: Նրանք այս անգամ այցելել էին հայազգի անպարտելի զորավար Միխայիլ Լորիս-Մելիքովին (Ծնվել է 1825թ., Թբիլիսիում, մահացել՝ 1888թ. Ֆրանսիայում, թաղված էր Թիֆլիսի Վանքի բակում, իսկ եկեղեցու քանդումից հետո, 1932թ. նրա աճյունը տեղափոխվեց եւ ամփոփվեց Սուրբ Գեւորգ եկեղեցու բակում: Նա Ալեքսանդր Երկրորդ ցարի տիրապետության ժամանակ, վերջին մի քանի ամիսներին զբաղեցնում էր ներքին գործերի նախարարի պաշտոնը) նվիրված տեսաֆիլմով, որը Լորիս-Մելիքովի ոչ միայն Ռուսաստանի ռազմական ու պետական գործչի, այլեւ մեծ հայի սխրագործություններով հարուստ կյանքի վավերագրությունն է:

Ռուսական կայսեր վստահելի անձը եւ երկրի պատասխանատու պաշտոններ կրողը, անսահմանորեն սիրում էր իր ծննդավայր Թիֆլիսը: Անպարտելի զորավարն իր կտակում խնդրել էր, որ վերջին հանգրվանը գտնի Թիֆլիսում, իր զինակից գեներալների կողքին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը ներկայացրեց նաեւ «Էրգրի կարոտով» խորագրով գիրքը, որը Արեւմտյան Հայաստան կատարած ուխտագնացության նկարագիրն է:

Հայաստանի ոստիկանության ակադեմիայի պետ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հովհաննես Վարյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Սամվել Ռամազյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը իրենց ելույթներում արժեւորեցին մեծ զորավարի, պետական ու հասարակական գործչի օրինակը սերունդների դաստիարակության գործում: Թեմակալ առաջնորդը հորդորեց, որդեգրելով հայրենանվեր զավակների ճիշտ մտածելակերպը, նվիրումով ծառայել այն երկրին, որտեղ իրենք կայանում են որպես գործիչներ, սակայն ամենուրեք բարձր պահել իրենց ազգայինը, հայ լինելու հպարտությունը:

Սերգո Երիցյանը գնահատանքի խոսքեր ուղղեց տեսաֆիլմի վրա աշխատող ստեղծագործական խմբի անդամներին, ում արհեստավարժ աշխատանքի շնորհիվ նկարահանվեց «Միխայիլ Լորիս-Մելիքով. մեծ հայն ու անպարտելի զորավարը» տեսաֆիլմը եւ կայացավ գրքի շնորհանդեսը:

Միջոցառման ավարտին ներկաներին բաժանվեց Սերգո Երիցյանի, Սիմոն Ծատուրյանի, Միրզա Սլոյանի հեղինակած «Էրգրի կարոտով» գիրքը:

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ - 125

# ԵՎ ՀՆՉԵՑԻՆ ՆՐԱ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԹԲԻԼԻՍԻԻՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԻՆ

*Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան ռուսական դրամատիկական թատրոնում, թբիլիսյան միջազգային «Ռուսական ակումբ» մշակութա-լուսավորչական միության նախաձեռնությամբ եւ Վրաստանի մայրաքաղաքի մշակութային միջոցառումների կենտրոնի աջակցությամբ, բեմադրվեց թատերականացված ներկայացում՝ նվիրված 20-րդ դարի ռուս նշանավոր բանաստեղծ Օսիպ Մանդելշտամի (1891-1938) ծննդյան 125-ամյակին:*

Օսիպ Մանդելշտամը սովորել է Սորբոնի, Գեդելբերգի եւ Պետերբուրգի համալսարանների բանասիրական ֆակուլտետներում: Քաղաքացիական պատերազմի տարիներին, ապաստարան գտնելու նպատակով, դեգերել է Ռուսաստանում, Ուկրաինայում եւ Վրաստանում: Վրաստանի հետ է կապված նրա կյանքի կարեւորագույն հատվածը: Այստեղ նա բարեկամություն է հաստատում տեղի ստեղծագործողների հետ, որոնք միավորված էին «Երկնագույն եղջյուր» կազմակերպության մեջ: Դրանք էին՝ Պաոլո Իաշվիլին, Վալերիան Գափրինդաշվիլին, Տիցիան Տաբիձեն... Մանդելշտամը բացահայտ համակրում էր հայ բանաստեղծ Կարա Դերվիշին (Հակոբ Գենջյան): Նույնիսկ ռուսերեն թարգմանեց վերջինիս բանաստեղծություններից մեկը: Թբիլիսյան միջավայրը նրան ոգեշնչում էր գլուխգործոցների ստեղծման հարցում: Վրացական թեմայի նրա գլուխգործոցը հայտնի է «Երազում Թիֆլիսը սապատավոր եմ տեսնում» բանաստեղծությունը: Մանդելշտամի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում հայկական թեման: Նրան բախտ վիճակվեց աշխատել նաեւ Հայաստանում, ուր հրավիրվել էր լուսավորության ժողկոմ Աշքանազ Մռավյանի կողմից: Հայաստանում գտնվելու գլխավոր արդյունքը այդ երկրին նվիրված բանաստեղծությունների շարքն էր: Այդ գործերում արտահայտված են նրա հիացմունքը նման մարդկանց աշխատասիրության ու նպատակամղվածության համար:

«Երազում Թիֆլիսը սապատավոր եմ տեսնում» գրական-երաժշտական թատերականացված կոմպոզիցիան Նինա Զարդալիշվիլի-Շադուրու խմբագրությամբ բեմադրել է Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանը: Օսիպ Մանդելշտամի բանաստեղծությունների խոսքերով, երգահան Թենգիզ Ջաիանին գրեց երաժշտական կոմպոզիցիա: Ներկայացմանը մասնակցում էին Գրիբոյեդովի անվան թատրոնի դերասաններ Օլեգ Մճեդլիշվիլին, Արչիլ Բարաթաշվիլին, Մերաբ Կուսիկաշվիլին, ինչպես նաեւ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի դերասաններ Սերգեյ Սաֆարյանը եւ Աշոտ Սիմոնյանը:



***ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ***

*Նկարում.- Դրվագ ներկայացումից*

*Լուսանկարը՝ ՅՈՒՐԻ ԱԿՈՒԼՅԱՆԻ*

ì²ðì°È²Î°ðä

## ԻՆՉՊԵՍ ՆՎԵՐ ԸՆՏՐԵԼ



***Հյուր գնալը, ինչ խոսք, հաճելի է, թեպետ դա ուղեկցվում է բավականին բարդ գործով՝ նվերի ընտրությամբ: Ինչպե՞ս ընտրենք համապատասխան նվեր:***

***Ս.Սիմոնյան***

***Ախալքալաքի***

Իհարկե, դա ճաշակի խնդիր է, սակայն թանկարժեք իրեր գնելու կարիք չկա: Դրանով մենք նվեր ստացողին եւ մեզ հետ հրավիրված մյուս հյուրերին, ում գրպանին հարիր չէ, դժվարին կացության մեջ ենք դնում: Նվերը պետք է ընտրել նախապես, մտածված կերպով՝ հաշվի առնելով ստացողի հետաքրքրությունները: Միայն այդ դեպքում այն կուրախացնի:

Սեփական ձեռքերով պատրաստած ցանկացած իր շատ ավելի մեծ ուրախություն է պատճառում: Եվ հակառակը, դուք անտարբերություն կդրսեւորեք, եթե նվերը ոչ պիտանի որեւէ իր լինի: Չզարմանաք, եթե ձեզ հետ էլ նույն կերպ վարվեն:

Անձնական իրեր, օրինակ, կանանց՝ օծանելիք, տղամարդկանց՝ փողկապ, ընդունված է նվիրել մտերիմ մարդկանց եւ հարազատներին:

Կիրթ վարվելաձեւը ոչ միայն սովորեցնում է, թե ինչպես նվեր ընտրել, այլեւ թե ինչպես պետք է այն հանձնել եւ ինչպես ընդունել: Նվիրելիս՝ խուսափեք այնպիսի արտահայտություններից, ինչպես՝ «Ամբողջ օրը վազվզեցի, բայց ավելի լավ բան չգտա»:

Քաղաքավարի մարդը, նվեր ստանալիս, շնորհակալություն է հայտնում, բացում, նայում եւ կրկին շնորհակալություն հայտնում: Եվ անպայման՝ ժպիտով: Դժգոհությունը տեղին չէ, եթե նույնիսկ ձեզ այնպիսի բան են նվիրել, որը դուք արդեն ունեք: Հյուրը կարող է չիմանալ, եւ կարիք չկա այդ մասին նրան տեղեկացնել:

Եթե ձեզ կոնֆետներ, տորթ կամ մի ուրիշ քաղցրավենիք են բերել, մի՛ մոռացեք հյուրասիրել ներկաներին:

Բոլոր դեպքերում ծաղիկները լավագույն նվերն են, այլ ոչ թե մեկ այլ նվերի հավելում: Ալ կարմիր վարդեր ընդունված է նվիրել մորը, կնոջը, քրոջը, հարսնացուին: Կարմիրը համարվում է սիրո գույն:

Դեկորատիվ ծաղկամաններով ծաղիկներ պետք է նվիրել մտերիմ մարդկանց կամ այն դեպքում, եթե գիտեք, որ տվյալ անձը ցանկանում է այդ ծաղկից ունենալ:

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

## ՓՈՔՐԻԿԻ ՄԱՐՄՆԻ ԴԻՄԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



***Փոքրիկս հաճախ է հիվանդանում, բժիշկները խորհուրդ են տալիս բարձրացնել մարմնի դիմադրողականությունը: Տարբեր խորհուրդներ են տալիս, հաճախ նույնիսկ՝ միմյանց հակասող: Ինչպե՞ս վարվել:***

***Մ. Մարտիրոսյան***

***Նինոծմինդա***

Ինչպես հայտնի է, դիմադրողականությունը մեծ դեր է խաղում մարդու, հատկապես՝ երեխայի առողջության հարցում: Ձեր երեխայի օրգանիզմի դիմադրողականությունն ամրապնդելու համար առաջարկում ենք տնական լիմոնադ: Այն թե՛ համեղ է, թե՛ օգտակար:

Եռացրեք երեք լիտր ջուր եւ ավելացրեք 1 կտրտած կիտրոն, 1 բաժակ շաքարավազ: Լավ խառնեք եւ կրակից վերցրեք: Հենց որ կիտրոնն իջնի ներքեւ, լիմոնադը պատրաստ է: Երեխային ամեն առավոտ մանկական բաժակով լիմոնադ տվեք: Այս լիմոնադը խորհուրդ է տրվում 3 տարեկանից բարձր երեխաներին:

**ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

Ցիտրուսային մրգերից ալերգիա, աղեստամոքսային տրակտի հետ կապված խնդիրներ, ատոպիկ դերմատիտներ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է

Գրենլանդիայի սառույցների հալքը Համաշխարհային օվկիանոսի մակարդակն ավելի արագ է բարձրացնում, քան ավելի վաղ ենթադրվում էր: Այս եզրակացությանն են հանգել Դանիայի եւ Գրենլանդիայի երկրաբանահետախուզական ծառայության աշխատակիցները, որոնք ուսումնասիրել են աշխարհի կղզիներից խոշորագույնի սառցածածկույթի կազմությունը:

Գիտնականները պարզել են, որ, 2009 եւ 2010 թվականների առանձնապես շոգ ամառային սեզոններից հետո, ձյան եւ փխրուն ու հատիկավոր սառույցի (այսպես կոչված՝ ֆիռնի) շերտը, որը ծածկում է կղզու զգալի մասը, կորցրել է հալած ջուրը պահելու իր ունակությունը, որը լցվում է օվկիանոս: Սույն երեւույթը նախկինում հաշվի չի առնվել կլիմայական մոդելներ կազմողների կողմից, եւ կարող է նշանակել, որ մարդկությունը կլիմայի տաքացման արդյունքները կսկսի իր վրա զգալ ավելի վաղ, քան նախկինում ենթադրվում էր:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# 13 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՉԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՀՈԳԵՊԵՍ ՈՒԺԵՂ ՄԱՐԴԻԿ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

**7.** Նրանք անցյալի վրա չեն սեւեռվում: Բարոյապես ուժեղ մարդը իզուր ժամանակ չի վատնում՝ մտածելով անցյալի եւ այն մասին, որ ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել: Նրանք ընդունում են անցյալը եւ դասեր քաղում դրանից: Սակայն վատ պահերը նրանք կրկին չեն վերապրում եւ ափսոսում անցած փառքը: Դրա փոխարեն, նրանք ապրում են ներկայով եւ ապագայի պլաններ են կազմում:



**8.** Նրանք նույն սխալները մի քանի անգամ չեն անում: Բարոյապես ուժեղ մարդիկ իրենց արարքների համար պատասխանատվություն են զգում եւ սովորում սեփական սխալների վրա: Արդյունքում, նրանք սխալները մի քանի անգամ չեն կրկնում: Դրա փոխարեն, նրանք առաջ են շարժվում եւ ավելի ճիշտ որոշումներ կայացնում:

**9.** Նրանք չեն նախանձում ուրիշներին իրենց հաջողությունների համար: Բարոյապես ուժեղ մարդը կարողանում է գնահատել եւ ուրախանալ այլ մարդկանց հաջողություններով: Դա շատ կարեւոր է: Նրանք իրենց վատ են զգում, երբ ուրիշները գերազանցում են իրենց: Դրա փոխարեն, նրանք ընդունում են, որ հաջողությունը ձեռք է բերվում դժվարին աշխատանքի արդյունքում եւ համառորեն աշխատում են հաջողության հասնելու համար:

**10.** Նրանք առաջին անհաջողությունից հետո չեն հանձնվում: Սա յուրաքանչյուր պարտություն ավելի լավ անելու հնարավորություն է: Նույնիսկ մեծ ձեռներեցներն են ընդունում, որ իրենց նախնական փորձերը մեծաթիվ անհաջողությունների են հանգեցրել: Բարոյապես ուժեղ մարդը պատրաստ է երբեք թեւաթափ չլինել եւ շարունակել փորձել այնքան ժամանակ, մինչեւ հասնի ցանկալիին, քանի որ յուրաքանչյուր պարտություն ավելի է մոտեցնում հաղթանակը:

**11.** Նրանք չեն վախենում մենակությունից: Բարոյապես ուժեղ մարդը գնահատում եւ հաճույք է ստանում այն պահերից, երբ կարողանում է մենակ մնալ սեփական մտքերի հետ: Այդ ժամանակն օգտագործում է մտածելու եւ նախագծեր կազմելու վրա: Նա անընդհատ կախված չէ ուրիշներից ու նրանց տրամադրություններից: Նրանք կարողանում են երջանիկ լինել թե՛ ուրիշների հետ եւ թե՛ մենակ ժամանակ:

**12.** Նրանք չեն մտածում, որ ամբողջ աշխարհն իրենց պարտք է: Բարոյապես ուժեղ մարդիկ չեն մտածում, որ ուրիշները պետք է հոգ տանեն իրենց մասին:

**13.** Նրանք ակնթարթային արդյունքներ չեն սպասում: Բարոյապես ուժեղ մարդն իր եռանդն ու ժամանակը ներդնում է որոշակի չափաբաժիններով եւ տոնում իր գործում գրանցվող յուրաքանչյուր փոքրիկ հաղթանակը: Նրանք հասկանում են, որ որակական փոփոխությունների հասնելու համար ժամանակ է պահանջվում:

ԽՈՐՀՈՒՐԴ

## ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՀԱՃՈՒՅՔՈՎ

Եթե դուք նյարդային ցնցում, խոր ապրումներ եք ունեցել, ապա վարդի բույրը կօգնի հանգստանալ: Ջգացմունքային շոկի դեպքում օգտակար է նաեւ անանուխը:

Խորդենու յուղը բարձրացնում է տոնուսը եւ, միաժամանակ, թուլացնում նյարդերը, բարելավում արյան շրջանառությունը, վերականգնում օրգանիզմի պաշտպանական մեխանիզմները:

Եղեսպակն ու երիցուկը հակաբորբոքային ազդեցություն ունեն, ինչպես նաեւ հրաշալի միջոց են անքնության դեմ:

Հասմիկն օգտագործվում է մաշկային այնպիսի հիվանդությունների բուժման ժամանակ, ինչպիսիք են էկզեման, դերմատիտը: Հասմիկի յուղն օգտագործվում է կանանց սեռական համակարգի աշխատանքի կարգավորման համար, փոքր կոնքում արյան շրջանառությունը բարելավելու համար:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ, տգետի հետ մեղր ուտելը դժվար է...

***ՋԻՎԱՆԻ***
***(1846-1909)***
***Հայ աշուղ***

Բախտը գարնան օրվա նման փոփոխվում է վայրկենապես. մերթ ամպում է, ձյուն է տեղում, մերթ արեւոտ շողում այնպես...

***ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ***
***(1705-1791)***
***Վրաց բանաստեղծ***

Կյանքի իմաստի համառոտ ձեւակերպումը կարող է այսպիսին լինել. աշխարհը շարժվում է ու կատարելագործվում: Գլխավոր խնդիրն այդ շարժման մեջ ներդրում ունենալն է, դրան ենթարկվելը եւ դրա հետ համագործակցելը:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Ոչ ոք անցյալում չի ապրել, ոչ մեկը չի ապրելու ապագայում, կյանքի իրական ձեւը ներկան է:

***Ա.ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ***
***(1788-1860)***
***Գերմանացի փիլիսոփա, գրող***

Ընկերությունը կրկնապատկում է ուրախությունն ու կիսով չափ պակասեցնում վշտերը:

***ԲԵԿՈՆ***
***(1561-1626)***
***Անգլիացի փիլիսոփա***

Հարկավոր է ուտել, որպեսզի ապրել, այլ ոչ թե ապրել, որպեսզի ուտել:

***ՍՈԿՐԱՏԵՍ***
***(մ.թ.ա.469-մ.թ.ա.399)***
***Հին հույն փիլիսոփա***

Ընկերությունը այն միակ ցեմենտն է, որն ունակ է միաձուլել աշխարհը:

***ՎՈՒԴՐՈՈՒ ՎԻԼՍՈՆ***
***(1856-1924)***
***ԱՄՆ 28-րդ նախագահ***

Կյանքի դպրոցում սովորելը պարտադիր է. դրանից ոչ մեկը չի կարող խուսափել:

***Ջ.ԱՅՎԱԶՅԱՆ***
***«Վրաստան»-ի ընթերցող***

²Ü°Î¸àîÜ°ð

** Երիտասարդ ամուսինները բժշկին բողոքում են, որ չեն կարողանում երեխա ունենալ եւ այդ առումով շատ մտահոգ են: Պատմում են, թե ինչեր են արել, ինչպես, ինչ հերթականությամբ եւ այլն, եւ այլն...*

*Նրանց երկար լսելուց հետո, բժիշկը վերջապես հարցնում է.*

*- Իսկ դուք չե՞ք փորձել միասին քնել:*

** - Բժի՛շկ, դուք արգելեցիք գիշերն ուտել, եւ ես արդյունքում մրսեցի:*

*- Մեկը մյուսի հետ ի՞նչ կապ ունի:*

*- Ինչպե՞ս թե ինչ կապ. ես ամբողջ գիշեր անցկացրի սառնարանի մոտ կանգնած՝ հավին նայելով ու մրսեցի:*

** Դուք ցանկանում եք առանց Լուվր գնալու հիանալ Մոնա Լիզայի ժպիտո՞վ: Ուրեմն ձեր կնոջը հարցրեք, թե որտե՞ղ է մսխել ձեր աշխատավարձը:*

** Մատուցո՛ղ, իմ ապուրի մեջ ճանճ կա:*

*- Այո, իսկապես, բայց դուք զուր եք անհանգստանում, դժվար թե այդ փոքրիկ արարածը կարողանա ուտել ձեր ողջ ապուրը:*

## ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

*Աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, մարտի 10-ի երեկոյան, հանդիպում ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:*



Ռազմավարական գործընկեր երկու պետությունների ղեկավարները քննարկեցին հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների օրակարգին վերաբերող հարցերի լայն շրջանակ, անդրադարձան նաեւ եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների զարգացման հեռանկարին, մտքեր փոխանակեցին միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրների ու մարտահրավերների շուրջ:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի առաջարկությամբ, կողմերը քննարկեցին Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակցության վերաբերյալ հարցեր: Հանդիպմանը Վլադիմիր Պուտինը հայ-ռուսական հարաբերությունները որակեց՝ որպես ռազմավարական գործընկերություն:

Անդրադառնալով Սիրիայի իրադարձությունների հարցին՝ նշվեց, որ Հայաստանը այդ հարցում շարունակում է աջակցել Ռուսաստանին: Հայաստանի նախագահի հավաստմամբ, Սիրիայում ռազմական գործողությունները դադարեցնելու մասին պայմանավորվածությունը կարող է դառնալ հարցի քաղաքական կարգավորման բանալին:

Սերժ Սարգսյանը եւ Վլադիմիր Պուտինը քննարկել են նաեւ ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացի ներկա փուլին, առկա խնդիրներին եւ այդ գործընթացն առաջ մղելու հնարավորություններին վերաբերող հարցեր:

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակության կազմում Մոսկվայում գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մարտի 10-ին հանդիպեց Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ:*

Հանդիպմանն անդրադարձ արվեց երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ փոխգործակցությանը, պարբերական խորհրդատվությունների անցկացմանը, մտքեր փոխանակվեցին հրատապ միջազգային եւ տարածաշրջանային խնդիրների շուրջ:

Հանդիպման ավարտին Էդվարդ Նալբանդյանն ու Սերգեյ Լավրովն ստորագրեցին Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարությունների միջեւ 2016-2017թթ. խորհրդատվությունների ծրագիրը, որով նախատեսվում է առաջիկա երկու տարիների ընթացքում ԱԳՆ-ների միջեւ անցկացնել միջազգային, տարածաշրջանային խնդիրների, տեղեկատվական ապահովման, հյուպատոսական եւ այլ հարցերի վերաբերյալ շուրջ երեք տասնյակ խորհրդատվություններ:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ. ԽՈՐԱՆՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յանս Ստոլտենբերգը Հայաստանի արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարներ Էդվարդ Նալբանդյանի ու Սեյրան Օհանյանի հետ Բրյուսելում կայացած հանդիպմանը շնորհակալություն հայտնեց Հայաստանին Աֆղանստանում եւ Կոսովոյում ՆԱՏՕ-ի առաքելություններին ցուցաբերած աջակցության համար:*



Բրյուսելում Էդվարդ Նալբանդյանը եւ Սեյրան Օհանյանը հանդիպումներ ունեցան նաեւ Հյուսիսատլանտյան դաշինքի երկրների դեսպանների հետ, որի ընթացքում քննարկվեցին դաշինքի հետ Հայաստանի համագործակցության եւ տարածքաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը ողջունեց Հայաստանի հանձնառությունն իրականացնելու ՆԱՏՕ-ի բարեվարքության ամրապնդման ծրագիրը, ինչպես նաեւ կյանքի կոչելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւը (Կանանց, խաղաղության եւ անվտանգության խնդիրներին առնչվող բանաձեւ):

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում, ներկայումս Հայաստանն իրականացնում է իր չորրորդ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (2014-2016 թթ.):

## ՀԱՍՏԱՏՎԵՑ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

*ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի նախագահությամբ մարտի 10-ին տեղի է ունեցել Արցախի Հանրապետության կառավարության հերթական նիստը:*

Նիստում հաստատվել է ԼՂՀ տնտեսական զարգացմանն ուղղված՝ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը: Այն նպատակաուղղված է տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, պետական աջակցության գործիքների կիրառման միջոցով տեղական արտադրության ծավալների ավելացման խթանմանը: Ծրագրով նախատեսվում է նաեւ ընդլայնել տեղական արտադրության արտահանելի հատվածը, մասնավորապես, նպաստել արտահանման տեսականու եւ շուկաների դիվերսիֆիկացմանը եւ է՛լ ավելի խորացնել պետություն-մասնավոր հատված համագործակցությունը: Ծրագրի իրագործման համար նախատեսված է պետական բյուջեից հատկացնել 2,530 մլրդ դրամ գումար:

## 350 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ՝ «ՌՈՍԻԱ ՄՈԼ»-ՈՒՄ



*Երեւանի կենտրոնում, «Ռոսիա» կինոթատրոնի կողքին, բացվեց մայրաքաղաքի առեւտրի եւ ժամանցի նոր կենտրոնը՝ «Ռոսիա մոլ»-ը, որը 350 նոր աշխատատեղերի բացման հնարավորություն է ընձեռել:*

Բացմանը ներկա էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, կառավարության անդամներ, բիզնեսմեններ, հյուրեր Ռուսաստանից, Վրաստանից:

Մոլի սեփականատեր, «Սիլ կոնցեռն» ՍՊԸ հիմնադիր Խաչատուր Սուքիասյանի խոսքով, այն նպաստում է փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը: «Պետք է նկատել, որ մոլերը նույնպես նպաստում են փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը, որպես կառուցող՝ կարող եմ ասել՝ այո, դա խոշոր ներդրում է, բայց այստեղ 100-ավոր աշխատատեղեր են ստեղծվում, դրանից առաջ շինարարական աշխատանքներ են եղել, որոնք նպաստում են, որ մի քայլ առաջ գնան հայկական շինարարարական արտադրամասերը: Նրանք սովորում ու դառնում են ավելի պիտանի մասնագետներ»,- ասաց գործարարը: Խաչատուր Սուքիասյանը նկատեց, որ Հայաստանում տարբեր ոլորտներում մրցունակ արտադրանք ստեղծելու մեծ հնարավորություններ կան: «Հայերը շատ լավ միտք ունեն, կարող են որակյալ արտադրանք ապահովել: Անհրաժեշտ է ֆինանսական միկրովարկեր տրամադրել, որ ՓՄՁ բիզնեսներն ապագայում դառնան խոշոր բրենդներ, այդ հնարավորությունը կա Հայաստանում: Ես ինքս էլ զարմացած եմ, թե ինչ կարգի արտադրանք են կարողանում տալ հագուստի արտադրությամբ զբաղվողները»,- հավելեց նա:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՄՐՑԱՇԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

***Մարտի 10-ին, աշխատանքային այցով Ռուսաստանում գտնվող Հայաստանի նախագահ, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում մասնակցեց Շախմատի աշխարհի չեմպիոնի հավակնորդների մրցաշարի հանդիսավոր բացման արարողությանը:***

***Մրցաշարին մասնակցում է աշխարհահռչակ 8 շախմատիստ, այդ թվում՝ նաեւ Լեւոն Արոնյանը: Երկու շրջանից բաղկացած այդ ստուգատեսի հաղթողն իրավունք կունենա մասնակցել նոյեմբերի 11-30-ը Նյու Յորքում կայանալիք չեմպիոնական մրցախաղին:***

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



***Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, ՀՀ քաղաքական, հասարակական գործիչները Եռաբլուրում ծաղիկ խոնարհեցին երջանկահիշատակ սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակին: Մարտի 5-ին սպարապետի ծննդյան օրն է, նա կդառնար 57 տարեկան:***

***«ՀՀ Ազգային հերոս», «Արցախի հերոս», «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ Վազգեն Սարգսյանը ծնվել է 1959 թվականի մարտի 5-ին: Եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, Հայաստանի պաշտպանության նախարար, պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի գծով պետնախարար: 1995 թվականին կրկին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար, իսկ 1999-ին՝ դարձել ՀՀ վարչապետ:***

***Սպանվել է 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում, զինված անձանց հարձակման հետեւանքով:***

## ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՔԱՐ՝ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ

***Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը Գյումրիի Սրբոց Նահատակաց առաջնորդանիստ հայ կաթողիկե տաճարին նվիրել է խորհրդանշական մի քար՝ վերցված Հռոմի Սուրբ Պետրոսի Մայր Տաճարի պատից՝ ի նշան միության եւ հաղորդության: Ինչպես տեղեկացրին հայ կաթողիկե առաջնորդարանի մամլո դիվանից, քարը Սրբազան Պապի անունից ուղարկել է Վատիկանի Սուրբ Պետրոսի Պապական աթոռանիստ տաճարի լուսարարապետ Կարդինալ Անջելո Քոմաստրին՝ հատուկ նամակի հետ միասին: Խորհրդանշական քարը կզետեղվի Գյումրիի Սրբոց Նահատակաց եկեղեցու պատին՝ նշում են առաջնորդարանից:***

## ԳՐԱՆՑՎԵԼ Է ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

***Սպառողական գների փոփոխության արդյունքում, Հայաստանում ընդհանուր առմամբ գրանցվել է գնանկում: Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2016թ. փետրվարին, հունվարի համեմատ, երկրում սպառողական շուկայում գրացվել է 1,4% սպառողական գների անկում, մասնավորապես, պարենային ապրանքների գները նվազել են 3,2, ոչ պարենային ապրանքներինը՝ 0,6, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0,3 տոկոսով:***

CyanMagentaYellowBlack



ԿՐԹՕՋԱԽ

## ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆԻ ԴՊՐՈՑԻ ՀՅՈՒՐԸ ԳԻՈՐԳԻ ՄԱՉԱԲԵԼԻՆ ԷՐ

Ներկա ժամանակաշրջանի կրթական ոլորտի ամենահրատապ հարցերից մեկը ուսուցչի գործունեություն սկսելու, մասնագիտական զարգացման եւ կարիերային առաջընթացի սխեմայի ուղեցույցի հետ կապված հարցն է: Իհարկե, ուսուցիչները ծանոթ էին դրան, սակայն դրա վերաբերյալ հայերեն գրականության պակաս էին զգում:

Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի հյուրերն էին Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Գիորգի Մաչաբելին, տեղակալ Մանանա Ռատիանին եւ նրանց ուղեկցող փորձագետները: Հյուրերը դպրոցի ուսուցիչներին նվիրեցին հայերեն թարգմանված «Ուսուցչի գործունեություն սկսելու, մասնագիտական զարգացման եւ կարիերային առաջընթացի սխեմայի ուղեցույց» եւ «Ուսուցչի գործունեություն սկսելու, մասնագիտական զարգացման եւ կարիերային առաջընթացի սխեմա» գրքերը:

Հանդիպումն անցավ ջերմ, գործարար մթնոլորտում:

*ՄԵԽԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի տնօրեն*

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2016

## ՓՈՓՈԽՎՈՒՄ ԵՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Ստոկհոլմում կայանալիք «Եվրատեսիլ-2016» երաժշտական մրցույթի քվեարկության կանոններն էական փոփոխություններ են կրելու:*



Ավելի վաղ, մասնակիցների ցուցաբերած արդյունքը «կոմբինացված» էր. այն գոյանում էր պրոֆեսիոնալ ժյուրիի եւ հանդիսատեսների քվեարկության արդյունքներից:

Նոր կանոնները «եվրատեսիլի» անցկացման ընթացքում ենթադրում են, որ պրոֆեսիոնալ ժյուրին եւ յուրաքանչյուր երկրի հեռուստադիտողները մրցույթի մասնակիցներին գնահատելու են առանձնաբար՝ տալով 1-ից մինչեւ 8, նաեւ 10 եւ 12 բալ:

Արդյունքները հայտարարելիս՝ կնշվեն ժյուրիի բալերը, ապա դրանց կավելացնեն հանդիսականների քվեարկության արդյունքները: Միագումար արդյունքները կսկսեն հայտարարել մրցույթի՝ առավել անհաջող ելույթ ունեցած մասնակիցներից:




«Եվրատեսիլ-2016» երաժշտական մրցույթը Ստոկհոլմում տեղի կունենա այն բանից հետո, երբ մեկ տարի առաջ Վիեննայում հաղթանակ տարավ Շվեդիայում ժողովրդականություն վայելող երգիչ Մոնս Սելմերլյովը՝ «Հերոսը» երգով. դա Շվեդիայի մասնակցի երկրորդ հաղթանակը դարձավ երեք տարում: Մրցույթում, որն անցկացվելու է 2016 թվականի մայիսի 10-14-ը, Վրաստանը ներկայացնում է Նիկա Քոչարովը եւ «Young Georgian Lolitaz» խումբը, իսկ Հայաստանը՝ Իվետա Մուկուչյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՎԵՐՍԿՍՎՈՒՄ Է «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ

Հարգելի' հայրենակիցներ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը վերսկսում է սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է՝ աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստան-Հայրենիքը, նրանց մեջ սերմանել ազգային ինքնության գիտակցություն, ծանոթացնել իր ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ ընտանիքին:

Ծրագիրը 2016թ. մեկնարկում է հունիսի 12-ին եւ շարունակվելու է մինչեւ օգոստոսի 27-ը՝ 8 փուլերով (յուրաքանչյուր փուլը՝ 14 օր, որից 9 օրը՝ հյուրընկալող ընտանիքում, 4 օրը՝ ճամբարում): Ծրագրին կարող են մասնակցել 13-18 տարեկան երիտասարդները, ովքեր նախկինում չեն մասնակցել «Արի տուն» ծրագրին:

Ծրագրի ընթացքում երիտասարդները կարող են հյուրընկալվել բարեկամների տանը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ Երեւան քաղաքի վարչական շրջանների, ՀՀ մարզպետարանների եւ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից ընտրված ընտանիքներում: Երիտասարդներն ընտանիքներում հյուրընկալվում են անհատույց:

Ծրագրին մասնակցության համար խմբերի ու անհատների հավաքագրումը եւ Հայաստան այցելության գործընթացն իրականացվում է սփյուռքի համայնքային կառույցների, կրթօջախների, հայկական կազմակերպությունների կողմից, տվյալ երկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների աջակցությամբ: Ծրագրին մասնակցելու համար կարող են դիմել նաեւ անհատապես՝ տեղեկացնելով համապատասխան համայնքային կառույցին: Հայաստան այցելող երիտասարդներն իրենց ճանապարհածախսը հոգում են սեփական կամ հովանավորների միջոցներով:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում, ՀՀ սփյուռքի նախարարությունն ապահովում է երիտասարդների դիմավորումը եւ ճանապարհումը, կազմակերպում է հայոց լեզվի դասընթացներ, այցելություններ թանգարաններ, շրջայցեր՝ Հայաստանի տեսարժան վայրերով: Ծրագրի ճամբարային փուլում կկազմակերպվեն նաեւ ուսուցողական ծրագրեր. հայոց լեզվի, հայրենագիտության, ազգային երգի ու պարի դասընթացներ: Կկազմակերպվեն հանդիպումներ Հայաստանի պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ եւ այլն: Պտույտների ժամանակ անվտանգությունն ապահովելու նպատակով, նրանց ուղեկցելու են բժիշկը եւ ոստիկանական անձնակազմը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչություն Հասցեն՝ ք. Երեւան 0010, Վ. Սարգսյան 3, Հեռ.՝ (+37410) 58-56-01 (117) (+37460) 500-830 52-02-46, 52-14-10 Էլ. փոստ՝ aritun.mindiaspora@gmail.com

## ՀԱՄԵՑԵՔ «ՊԼԱՆԵՏԱ 100»

Մանկական կենտրոն «Պլանետա 100»-ը հրավիրում է ձեզ եւ ձեր երեխաներին մեզ հետ միասին անցկացնել ծննդյան անմոռանալի տոներ: Մենք առաջարկում ենք հետաքրքիր խաղեր եւ ծրագրեր բոլոր տարիքի երեխաների համար, ինչպես նաեւ համեղ ուտեստներ: Միջոցառումները վարում են Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի դերասանները, վրացերեն, հայերեն եւ ռուսերեն:



Համեցեք եւ ուրախություն պարգեւեք ձեր երեխաներին:

Հասցեն. Գորգասալի 4ա:
Հեռ.՝ 5-97-97-75-68, 5-92-92-02-23

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ադմինիստրատիվ-տերիտորիալ միավոր: 6.Կետադրական նշան: 10.Պարզունակ, աղեխորշավոր կենդանի: 11.Որսորդական շան տեսակ: 13.Մեծ խմբերով ապրող փոքրիկ միջատ: 14.Կազակների բնակավայր: 15.Ճանապարհները ծածկելու ձյութանման զանգված: 17.Արվեստի տեսակ: 18.Քաղաք Կիլիկյան Հայաստանում: 21.Զգտման, տենչանքի առարկա: 25.Թթվահամ հատապտուղ: 26.Վրաց աշխարհագետ ... Մարուաշվիլի: 27.Պարտքի դիմաց պահ տրվող արժեք: 28.Ուրիշի ստեղծագործությունն իր անունով ներկայացնող: 29.Պտղաբերության աստվածը փյունիկյան դիցարանում: 33.Բնածին մեծ շնորհք, ձիրք: 35.Իսպանիայի խորհրդարանի անվանումը: 39.Ռուսական ժողովրդական պար: 40.Պետություն Աֆրիկայի հյուսիսում: 42.Քնարական ստեղծագործություն, որը ներկայացվում է երգի տեսքով: 44.Ավստրալական պարկավոր արջ: 45.Հանքային ջրի տեսակ: 46.Էլեկտրական տատանումներ գոյացնող գեներատոր: 47.15 տողից բաղկացած բանաստեղծական ձեւ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Նկարազարդ ձեռագործ գորգ: 2.Եվրոպական պետության մայրաքաղաք: 3.Երեւակայական, անիրական պատկեր: 4.Ձագեր հանելու նպատակով ձվերի վրա նստած թռչուն: 5.Սպորտային թիմային խաղ: 6.Վրաց լեգենդար ֆուտբոլիստ ... Պայճաձե: 7.Անգլիացի գրող, ուտոպիստական սոցիալիզմի հիմնադիրներից: 8.Կեղտաջրերի հեռացման համակարգ: 9.Կշռի չափման միավոր: 12.Ավստրիացի գրող: 13.Անհաղթահարելի տենչ, գրգիռ: 16.Հայ օպերային երգիչ, բարիտոն: 19.Իտալական հին պղնձե դրամ: 20.Լարային գործիքների իտալացի վարպետների ընտանիք: 22.Բերդի կամ քաղաքի զորքերի պետ: 23.Լարային կսմիթավոր երաժշտական գործիք: 24.Շեքսպիրի ողբերգություններից: 25.Սպառնալիք, պոռոտախոսություն: 28.Գետ Հնդկաստանում: 30.Մետաքսյա ոսկեթել եւ արծաթաթել գործվածք: 31.Շշմեցնող հարված բռնցքամարտում: 32.Բարձր երգեցիկ ձայն: 34.Կազակական ջոկատի հրամանատար: 36.Հեսան, մետաղյա գործիքներ սրելու առարկա: 37.Վարդազգի մրգատու ծառի պտուղ: 38.Ամերիկացի թեթեւատլետ, հեռացատկորդ: 41.Կանացի զգեստ Հարավարեւելյան Ասիայի երկրներում: 43.Աղեղից արձակվող, խոցող զենք:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ծերուն: 6.Շանթ: 10.Ռուբեն: 11.Վսեմ: 12.Շատրվան: 17.Նար: 18.Ջանի: 20.Ամերիկա: 23.Մոզի: 25.Ինդոս: 28.Դակար: 30.Հավետ: 33.Դուրս: 35.Նանսեն: 36.Ասրյան: 37.Նարե: 38.Արմատ: 41.Առնո: 43.Տակ: 45.Երամ: 46.Սինա: 48.Խառն: 49.Վտակ: 51.Քսան: 54.Ավանակ: 56.Ինկ: 57.Նետ: 58.Ռես: 59.Ուսաշոր: 60.Արու: 61.Թամար: 62.Սառա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Եղեմ: 3.Ուրիշ: 4.Քույր: 5.Թեմա: 7.Արսեն: 8.Թեմուր: 9.Հովազ: 13.Արազ: 14.Վերեւ: 15.Նիկիտա: 16.Լիմա: 19.Արա: 21.Միիր: 22.Ան: 24.Որդան: 26.Դասվար: 27.Սենս: 28.Դիանա: 29.Կարեն: 31.Ասպետ: 32.Ենթակա: 34.Ունայն: 39.Մենք: 40.Տապան: 42.Ոսկ: 44.Ախթամար: 47.Ազատ: 49.Վադուց: 50.Արշակ: 52.Սիսեռ: 53.Նկար: 54.Անոթ: 55.Վերա: 58.Ռուս:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net
Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն
“ВРАСТАН” Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445